Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 05-06-2020 թ. որոշմամբ
««ՇԻՐԱԿԱՑՈՒ ՃԵՄԱՐԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
հիմնադրամի 2019 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը	«ՇԻՐԱԿԱՑՈՒ ՃԵՄԱՐԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»	
1.2 Գտնվելու վայրը	ԵՐԵՎԱՆ Արտեմ Միկոյան փող., 35	
1.3 Պետական գրանցման համարը	222.160.130501	
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը	2012-08-03	
1.5 ՀՎՀՀ-ն	00878453	
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)	+(374)95993553	
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը	http://fund.shirakatsy.am	
1.8 Էլեկտրոնային փոստը	fund@shirakatsy.am	
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Արփի Աջեմյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	2	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	0	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ծրագրի անվանումը	8.3 Չափը
8.1.1 Պետական և հայմայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Ֆինանսական աջակցություն	450000
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
	Ֆինանսական աջակցություն	17471413
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ	813407	
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		

10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Սպորտդահլիճի հատակի կառուցում	11000000	
Նստարաններ Ճեմարանիտարածքում	300000	
Գրադարանի վերանորոգում	1285358	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	18278227	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	12585358	

Նշումներ՝

Կից ներկայացվում է աուդիտորական եզրակացությունը՝ 3 թերթից:
թերթերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

AJEMIAN ARPI 7604720455

Digitally signed by AJEMIAN ARPI 7604720455
DN: c=AM, sn=•••••••, givenName=••••, serialNumber=254a21b7e6f2, cn=AJEMIAN ARPI 7604720455
Date: 2020.06.25 16:22:17 +04'00'

«Շիրակացու ճեմարանի զարգացման» Հիմնադրամ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

Հազար դրամ	Ծնթ.	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերաներ-կայացված)	2018թ. հունվարի 1-ի դրությամբ (վերաներ-կայացված)
ԱԿՏԻՎՆԵՐ				
Ոչ ընթացիկ ակտիվներ				
Հիմնական միջոցներ	4	425	243	-
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**425**	**243**	**-**
Ընթացիկ ակտիվներ				
Պաշարներ		-	-	1,976
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր		5	4	291
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	5	2,259	3,660	1,904
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**2,264**	**3,664**	**4,171**
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		**2,689**	**3,907**	**4,171**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ				
Զուտ ակտիվներ				
Կուտակված արդյունք		1,015	954	2,781
Ընդամենը զուտ ակտիվներ		**1,015**	**954**	**2,781**
Ոչ ընթացիկ պարտավորություններ				
Փոխառություններ		-	-	836
Հետաձգված եկամուտ	6	425	243	-
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**425**	**243**	**836**
Ընթացիկ պարտավորություններ				
Փոխառություններ	7	1,000	1,000	-
Կրեդիտորական և այլ պարտավորություններ	8	244	1,704	554
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություն		5	6	-
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**1,249**	**2,710**	**554**
ԸՆԴԱՄԵՆԸ ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		**2,689**	**3,907**	**4,171**

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2020թ. հունիսի 01-ին:

Տնօրեն

Արփի Աջեմյան

Ֆինանսական հաշվապահության
պատասխանատու

Քրիստինա Սահակյան

«Շիրակացու ճեմարանի զարգացման» Հիմնադրամ
Համապարփակ ֆինանսական արդյունքի մասինհաշվետվություն 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

Հազար դրամ	Ծնթ.	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի (վերաներ-կայացված)
Նվիրաբերությունից եկամուտներ	9	18,502	38,428
Շնորհներից եկամուտներ	6	51	22
Վարչական ծախսեր	10	(2,880)	(3,967)
Այլ գործառնական ծախսեր	11	(15,631)	(36,342)
Այլ գործառնական եկամուտներ		92	-
Գործառնական արդյունք		**134**	**(1,859)**
Ֆինանսական եկամուտ		27	28
Փոխարժեքային տարբերությունից զուտ օգուտ (վնաս)	12	(95)	10
Շահույթ (վնաս) մինչև հարկումը		**66**	**(1,821)**
Շահութահարկի գծով ծախս		(5)	(6)
Տարվա շահույթ (վնաս)		**61**	**(1,827)**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք			
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		**61**	**(1,827)**

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Շիրակացու ճեմարանի զարգացման» Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Շիրակացու ճեմարանի զարգացման» Հիմնադրամի (Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ 2019թ դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, զուտ ակտիվներում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Հիմնադրամի՝ 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ մեր կարծիքն արտահայտելու համար:

Այլ Հանգամանքներ

Ցանկանում ենք ուշադրություն հրավիրել այն փաստին, որ Հիմնադրամի 31 դեկտեմբերի 2018թ. դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացվել է այլ աուդիտորական կազմակերպության կողմից, որը 2019թ. մարտի 19-ին թվագրված անկախ աուդիտորի եզրակացությունում արտահայտել է չձևափոխված կարծիք:

Որպես 2019թ. ֆինանսական հաշվետվությունների աուդիտի մաս՝ մենք իրականացրել ենք ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 19-ում ներկայացված ճշգրտումների/վերադասակարգումների աուդիտը, որոնք կիրառվել են նախորդ տարվա ֆինանսական հաշվետվությունների տվյալները

վերահաշվարկելու համար: Մեր կարծիքով, նշված ճշգրտումները/վերադասակարգումները տեղին են և կիրառվել են ըստ պատշաճի:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին վերահսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Հիմնադրամի գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Հիմնադրամը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:
Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:
ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Բացի այդ, մենք.

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:

- Ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին վերահսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու և ոչ թե Հիմնադրամի ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:

- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռքբերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռքբերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ մենք տեղեկացնում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի մասին, ներառյալ ներքին վերահսկողությանը վերաբերող նշանակալի թերությունները:

Մենք կառավարման օղակներում ներգրավված անձանց նաև տրամադրում ենք հայտարարություն, ըստ որի՝ մենք պահպանել ենք անկախության վերաբերյալ վարքագծի պահանջները, ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների կամ այլ հարցերի մասին, որոնք, ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա, և, որտեղ կիրառելի է, նախազգուշական միջոցառումների մասին:

Կառավարման օղակներում ներգրավված անձանց հաղորդված հարցերից մենք որոշում ենք այն հարցերը, որոնք համալրվել են առավել նշանակալի ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում, և, հետևաբար, հանդիսանում են աուդիտի առանցքային հարցեր: Այս հարցերը նկարագրում ենք աուդիտի եզրակացությունում, եթե օրենսդրությամբ կամ իրավական ակտերով չի արգելվում տվյալ հարցի հրապարակային բացահայտումը, կամ, երբ խիստ բացառիկ հանգամանքներում, որոշում ենք, որ տվյալ հարցը չպետք է ներկայացվի աուդիտորի եզրակացությունում, քանի որ կարող է ողջամտորեն ակնկալվել, որ դրա ներկայացման հետ կապված բացասական հետևանքները ավելի շատ կլինեն, քան դրա ներկայացմամբ պայմանավորված հանրային օգուտը:

«Թրասթ Աուդիտ» ՓԲԸ
տնօրեն Հայկ Մարգարյան

Աուդիտի ղեկավար
Արմեն Ազիզյան

01 հունիսի 2020թ
ք. Երևան

Trust Audit CJSC is a member of JPA INTERNATIONAL
Trust Audit CJSC
321 office, 8 str. Tumanyan
0001 Yerevan, Armenia
Tel: +374(10) 516111
Email: info@trustaudit.am
www.trustaudit.am

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 25.06.2020 16:08